ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ

Մարդու իրավունքների պաշտպանը որպես կանխարգելման ազգային մեխանիզմ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է վերապահված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը:
Մարդու իրավունքների պաշպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ իր լիազորություններն իրականացնում է Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության և անկախ փորձագետների միջոցով:

Կանխարգելման ազգային մեխանիզմի լիազորությունները

Կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացուցիչներն իրավասու են՝

- ✓ իրականացնելու պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր ազատությունից զրկման վայրեր՝ վատ վերաբերմունքը կանխարգելելու նպատակով.
- ✓ նրանք պարտավոր չեն նախապես տեղեկացնել այցերի ժամանակի և նպատակի մասին.
- ✓ իրենց ընտրությամբ խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) և անարգել տեսակցել ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց, ինչպես նաև առանձնազրույցներ ունենալ նրանց հետ.
- ✓ անհրաժեշտության դեպքում ներգրավել թարգմանիչ, օգտագործել տեխնիկական միջոցներ.
- ✓ առանձնազրույցները ենթակա չեն միջամտության կամ գաղտնալսման որևէ մարմնի կամ երրորդ անձի կողմից.
- ✓ իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնել առաջարկություններ՝ ազատությունից զրկման ցանկացած վայրում գտնվող անձանց պահման պայմանները բարելավելու, ինչպես նաև վատ վերաբերմունքը կանխարգելելու նպատակով.
- ✓ ծանոթանալ իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերին, ստանալ դրանց պատճենները:

Պաշտպանին բողոք ներկայացնելը

Բողոքը Պաշտպանին ներկայացվում է գրավոր կամ բանավոր կարգով: Գրավոր կարգով ներկայացվող բողոքները կարող են անձամբ ներկայացվել Պաշտպանի աշխատակազմ, ուղարկվել փոստային ծառայության միջոցով կամ ներկայացվել առցանց: Բողոքի համար որևէ հատուկ ձև սահմանված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմողի անուն-ազգանունը, մարդու խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները, իսկ առկայության դեպքում՝ գործի պարզաբանման և լուծման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Բողոքը պետք է ներառի նաև ամիս-ամսաթիվ և լինի ստորագրված:
Պաշտպանին ուղղված բողոքները ենթակա չեն ստուգման կամ գրաքննության: Դրանք իրավասու մարմինների կամ կազմակերպությունների կողմից ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկվեն Պաշտպանին:

Հետադարձ կապ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, հասցե՝ ՀՀ, ք. Երևան,Պուշկինի 56ա, Հեռ.՝ 010-53-76-51, թեժ գիծ՝ 116:
Մարզային ստորաբաժանումներ. Շիրակի մարզ, ք. Գյումրի, Միհեր Մկրտչյան 44/46, Հեռ.՝ 00374-312-41981; Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 4, Հեռ.՝ 00374-264-30116; Սյունիքի մարզ, ք. Կապան, Մելիք Ստեփանյան 6, Հեռ.՝ 00374-285-20116: